գտնում են իր տղամարդի գերեզմանի մօտ այն ժամանակ, երբ իջնում է իր ձիուց, եւ ոսոխի կտրած գլուխը դնելով ամուսնի շիրիմի վրայ, ասում է՝ «այժմ թո՛ղ հանգստանան քո ոսկերքը»...

«Վերջին օրերումս Ուշնիի մէջ պատահած անցքը բաւականին երաշխաւորում է ասորոց կաթողիկոսի դաշնադրութիւնը մեզ հետ, — շարունակում էր նամակագիրը: — Այնտեղի շէյխը քանդել է տոել մի հին ասորոց վանք, նրա քարերը իր բաղնիքի շինուածքի համար գործ ածելու: Այդ այն վանքն է, ուր նեստորականները վաղեմի ժամանակներից սովորութիւն ունէին իրանց եպիսկոպոսների մարմինները թաղելու: Կաթողիկոսը, որպէս լսում եմ, բոլորովին կատաղած է այս բարբարոսութեան պատճառով: Այսօր նրա սուրհանդակը ինձ մօտ եկաւ: Կաթողիկոսը կանչում է ինձ: Առաւօտեան ճանապարհ կընկնեմ դէպի Ճոլամերիկ: Յարմա՛ր առիթ... պէտք է օգուտ քաղել դրանից»...

Ասորոց կաթողիկոսը նստում էր Ճոլամերկի Կոճանիս կոչուած գիւղում, որ սահմանակից էր Հաղբակին: Ասորոց մի ցեղ, որ կոչւում էր Ջուլօ, անյիշելի ժամանակներից, պատսպարուելով Ճոլամերկի լեռների մէջ, պահպանել էր իր անկախութիւնը, որպէս լազգիները Դաղստանում: Կաթողիկոսը, որ կոչւում էր Մար-Շիմոն, էր իր ցեղի քահանայապետը, միեւնոյն ժամանակ նրա մարմնաւոր իշխանը: Նա ունէր մինչեւ երեսուն հազար զէնք բռնող տղամարդիկ, մի խօսքով, նրա ժողովուրդը բոլորը պատերազմողներ էին: Կաթողիկոսը ինքը սուր էր կրում: Ճոլամերիկը, զետեղուած էր Կորդոաց լեռների մէջ, մի փոքրիկ, փակեալ Չինաստան էր, որի մուտքը կապուած էր օտարների համար: Այնտեղ բնակւում էին միայն ջուլոներ եւ հայեր: Եթէ ուրիշ մարդ այնտեղ մտնէր, առանց կաթողիկոսից թուղթ ունենալու իր ձեռքում, ամէն պատահող ջուլոն պատրաստ էր նրան սպանելու: Բոլոր ժողովուրդը անասնապահներ էին. նրանց կեանքի պէտքերը գոյեանում էին իրանց հօտերից: Ջուլօներն ամենեւին յարաբերութիւններ չունէին դրսի հետ, նրանք կենտրոնացած էին իրանց երկրի մէջ: Ջուլօն յայտնի է իր դիւրագրգիռ, բարկացկոտ եւ յանդուգն բնաւորութեամբ. նա միեւնոյն ժամանակ քաջ եւ բարի մարդ է: Բայց Կարօն ի՞նչ գործ ունէր միանալու այդ վայրենիների հետ. ի՞նչ դաշնադրութիւն էր, որ նա կապում էր ասորաց պատրիարքի հետ...

«Այստեղ (Բարդուղիմէոս առաքելոյ վանքում) ես ստացայ մի քանի նամակներ: Ն. Կ. Վ. գրում է Վարագայ վանքից, թէ գործերը այստեղ վատ են. քրդերի մի նոր արշաւանք թալանեց Հայոց-ձորը: Արտամէտ գիւղը իր ընդդիմադրութեան համար մոխիր դարձաւ: Հրձիգութիւնը թշնամիների կողմից